ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2018թ. դեկտեմբերի 3-5-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտե:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի 31-րդ լիագումար նիստին:

Քննարկված թեմաները՝ Լիագումար նիստի ընթացքում քննարկվել են Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների դատական համակարգերի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը, մասնավորապես, դատարաններում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը, քրեական արդարադատության հիմնախնդիրներին, դատավորների էթիկայի կանոնների կատարելագործմանը, դատական գործերի բաշխման արդյունավետության բարձրացմանն առչնվող հարցերը

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի հրավերով ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը 2018թ. դեկտեմբերի 3-ից 5-ը Ֆրանսիայի Հանրապետությունում (Ստրասբուրգ) մասնակցել է Կոմիտեի 31-րդ նիստին:

Լիագումար նիստի ընթացքում քննարկվել են Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների դատական համակարգերի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը, մասնավորապես, դատարաններում տեղեկատվական

տեխնոլոգիաների կիրառմանը, քրեական արդարադատության հիմնախնդիրներին, դատավորների էթիկայի կանոնների կատարելագործմանը, դատական գործերի բաշխման արդյունավետության բարձրացմանն առչնվող և մի շարք այլ հարցեր:

Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի նիստի շրջանակում նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը հանդես է եկել ելույթով: Իր խոսքում Վ. Քոչարյանը նշել է, որ այս տարվա գարնանը Հայաստանի քաղաքացիները դուրս եկան փողոցներ և հրապարակներ՝ իրականացնելու երազանքի երկիր կերտելու իրենց ցանկությունը, երկիր, որտեղ օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները և ժողովրդավարությունը ոչ միայն խոսքեր են, այլ իրականություն: Վիգեն Քոչարյանն ընդգծել է, որ նոր իշխանության ձևավորումը Հայաստանում իրականացվել է Սահմանադրությանը համապատասխան և օրենքի գերակայության ու ժողովրդավարական կառավարման սկզբունքներին համահունչ:

Արդարադատության նախարարի տեղակալը նշել է, որ արդարադատության ապահովումը, դատական իշխանության անկախությունը, հաշվետվողականության և թափանցիկության ամրապնդումը, ինչպես նաև դատական համակարգի նկատմամբ վստահության վերականգնումը Հայաստանի նոր կառավարության օրակարգային հարցերից են:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վ. Քոչարյանն իր ելույթում անդրադարձ է կատարել նաև այս տարվա ապրիլին ուժի մեջ մտած նոր դատական օրենսգրքի կարգավորումներին, մշակման փուլում գտնվող 2019-2024թթ. Դատաիրավական բարեփոխումների ռազմավարությանը և դրանից բխող Գործողությունների ծրագրին, ինչպես նաև արդարադատության ոլորտում Եվրոպայի խորհրդի հետ ձեռք բերված պայմանավորվածություններին ու հետագա քայլերին՝ միաժամանակ շեշտադրելով ԵԽ հնարավոր հետագա աջակցության տրամադրումը բարեփոխումների գործընթացին:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը ներկայացրել է ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի՝ Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի հետ

համագործակցություն իրականացնելու նախաձեռնությունը և հավելել, որ երկու կառույցների միջև փոխգործակցությունն էականորեն կնպաստի Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես նոր ձևավորված ինստիտուտի հետագա զարգացմանն ու կատարելագործմանը:

Արդյունքում, Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեն որոշում է կայացրել համագործակցել ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի հետ արդարադատության կառավարման ոլորտում նոր կանոնակարգերի մշակման և զարգացման շրջանակներում:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ **ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ**

06.12.2018թ.